ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/4487/02/16
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Ժ. Ասատրյան
Ն. Գաբրիելյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/4487/02/16**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Սվետլանա Ավագյանի հայցի ընդդեմ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության («Պրո Կրեդիտ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է, այսուհետ՝ Բանկ), «Հզոր Արգիշտի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն), Լևոն Ղարիբյանի, երրորդ անձինք՝ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտե, Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյան՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2026 թվականի որոշման դեմ Սվետլանա Ավագյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սվետլանա Ավագյանը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի, Լևոն Ղարիբյանի և Ընկերության միջև 30.10.2014 թվականին կնքված հիփոթեքի

հաջորդող գրավի պայմանագիրը, ու որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել գրավի իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 02.06.2025 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.02.2026 թվականի որոշմամբ Սվետլանա Ավագյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.06.2025 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սվետլանա Ավագյանը (ներկայացուցիչ Արամ Խաչատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Արմեն Սիմոնյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 60-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ և 379-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի սահմանափակվել վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, Դատարանում կողմերի հայտնած դիրքորոշումներով ու գործում առկա ապացույցներով, դրանք նորից է գնահատել և սխալ եզրահանգումներ է կատարել:

Վերաքննիչ դատարանը 06.09.2002 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի տրման հիմք հանդիսացող Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշումը, որի հիման վրա ծագել է Լևոն Ղարիբյանի սեփականության իրավունքը, գնահատել է որպես սեփականաշնորհման գործընթացի արդյունք՝ որպես նոր փաստ հաստատելով, որ այն համատեղ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույք համարվել չի կարող: Մինչդեռ բնակարանը ոչ թե սեփականաշնորհվել է, այլ հանդիսացել է կոոպերատիվի անդամներին պատկանող գույք, որը որպես փայ հատկացվել է այն անդամներին, ովքեր վճարել են փայի արժեքը: Հաշվի առնելով այն, որ բնակարանի նկատմամբ գրանցվել է Լևոն Ղարիբյանի սեփականության իրավունքը, ակնհայտ է, որ կոոպերատիվի փայը լրիվ վճարվել է, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ Լևոն Ղարիբյանի և իր ամուսնությունը գրանցվել է 11.02.1975 թվականին, հետևում է, որ կոոպերատիվի փայը վճարվել է համատեղ ամուսնության ընթացքում, ուստի այն հանդիսանում է ընդհանուր համատեղ գույք, որը գրավ դնելու համար անհրաժեշտ է նաև իր՝ որպես համասեփականատիրոջ համաձայնությունը, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.02.2026 թվականի որոշումն ու փոփոխել այն՝ հայցը բավարարել:

2.1 Բանկի կողմից բերված վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքը և հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Գործում առկա փաստաթղթերի ամբողջական, բազմակողմանի, օբյեկտիվ հետազոտումից և գնահատումից ակնհայտ է, որ վիճարկվող հիփոթեքի պայմանագիրը կնքվել է ՀՀ օրենսդրության պահանջների խստիվ պահպանմամբ, այն վավերացվել է նոտարական կարգով, պայմանագրից ծագող իրավունքներն ստացել են պետական գրանցում: Ակնհայտ է, որ պայմանագիրը կնքելիս գործարքի կողմ հանդիսացող Բանկը

տեղյակ չի եղել և ողջամտորեն չէր կարող ենթադրել, որ գույքն ունի այլ համասեփականատեր:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի «Բնակարանային, բնակշինարարական, ավտոտնակների և այլ կոոպերատիվներում գտնվող, քաղաքացուն պատկանող գույքը որպես անձնական սեփականություն գույքագրելու մասին» թիվ 16/3 որոշման համաձայն՝ գործադիր կոմիտեն որոշել է «1. Հանձնարարել (...) կոոպերատիվի անդամ քաղաքացիների դիմումների հիման վրա որպես անձնական սեփականություն գույքագրել բնակարանային, բնակշինարարական ավտոտնակների և այլ կոոպերատիվներում նրանց պատկանելիք մասը, եթե կոոպերատիվի անդամը լրիվ մուծել է իր փայը՝ բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի և իր օգտագործմանը տրված այլ շինության կամ տեղի համար: 2. Սահմանել, որ քաղաքացու անձնական սեփականությունը ճանաչված գույքի հետագա շահագործումը կատարվում է սեփականատիրոջ և կոոպերատիվի, իսկ վերջինիս գործունեությունը դադարելու դեպքում՝ սպասարկման ոլորտի համապատասխան կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրով (...)» **(հատոր 3-րդ, գ.թ. 141, 142).**

2) անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ **********[1] բնակարանի նկատմամբ Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա 08.09.2002 թվականին գրանցվել է Լևոն Ղարիբյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 11-14).**

3) «Պրո Կրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի՝ որպես գրավառուի, Լևոն Ղարիբյանի՝ որպես գրավատուի և «Հզոր Արգիշտի» ՍՊԸ-ի՝ որպես վարկառուի միջև 30.10.2014 թվականին կնքվել է թիվ 53047 հիփոթեքի հաջորդող պայմանագիրը: Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ ի ապահովումն գրավառուի և վարկառուի միջև 23.10.2014 թվականին կնքված թիվ FW4.193 գլխավոր վարկային պայմանագրով (...) սահմանված պարտավորությունների և պայմանների կատարման գրավատուն գրավ է դնում գրավառուի մոտ սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գույքը: Պայմանագրի 3.1-ին կետի համաձայն՝ սույն պայմանագրով գրավատուն գրավ է դնում սեփականության իրավունքով իրեն պատկանող **********[2] հասցեում գտնվող 89.86 ընդհանուր մակերեսով բնակարանը (...):

Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով **(հատոր 3-րդ, գ.թ. 130-132).**

4) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ **********[3] բնակարանի նկատմամբ գրավի, հիփոթեքի 30.10.2014 թվականի թիվ 5607 պայմանագրի հիման վրա 05.11.2014 թվականին գրանցվել է «Պրո Կրեդիտ Բանկ» ՓԲԸ գրավի իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 45).**

5) Լևոն Ղարիբյանի և Սվետլանա Ավագյանի ամուսնության ակտի գրանցման պատճենի համաձայն՝ ամուսնությունը գրանցվել է 11.02.1975 թվականին **(հատոր 4-րդ, գ.թ. 124):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների

[1] Առկա է անձնական տվյալ:
[2] Առկա է անձնական տվյալ:
[3] Առկա է անձնական տվյալ;

հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ու որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաքննության սահմաններին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Թեև հավասարության և մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լսումներ» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձևավորվել է նախադեպային իրավունք, որի համաձայն՝ լսումների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի ***հավասարությունը և մրցակցային դատավարությունը***, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, հետևողականորեն իր վճիռներում բացահայտել է նաև այդ սկզբունքների բովանդակությունը, ըստ որի՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ *(տե՛ս Դոմբո Բեհիրն ընդդեմ Նիդեռլանդների թիվ 14448/88 գանգատով Եվրոպական դատարանի 17.10.1993 թվականի վճիռը, կետեր 30-35)*:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ ևս արձանագրել է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ կենսագործումն ապահովելու համար պետք է օրենսդրորեն երաշխավորել ինչպես դատարանի մատչելիության, դատարան դիմելու հնարավորության ապահովման, այնպես էլ՝ գործն անկախ և անաչառ դատարանի կողմից արդարության պահանջների՝ մրցակցության և հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու իրավական հնարավորությունը *(տե՛ս Սահմանադրական դատարանի 17.11.2020 թվականի թիվ ՍԴՈ-1599 որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Քաղաքացիական դատավարության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխով ամրագրված են հավասարության և մրցակցության սկզբունքները, որի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող ***բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա:***

Վերոնշյալ սկզբունքների կենսագործման համատեքստում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտը բեկանում է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն անդրադառնում է վերաքննիչ բողոքի հիմքին և դրա հիմնավորումներին, եթե բողոք բերած անձը տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ վերաքննիչ բողոքի յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ (...):

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) վերաքննության սահմանների համանման կարգավորումներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում և վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը որոշում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ վերաքննիչ դատարանը ***կաշկանդված է*** վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտելով ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ *(տե՛ս Համայակ Ոսկանյանն ընդդեմ Վոլոդյա Հակոբյանի թիվ ԵԷԴ/1643/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելը մրցակցության սկզբունքի դրսևորում է քաղաքացիական դատավարությունում: Վերաքննիչ դատարանը ***կաշկանդված է*** բողոքաբերի կողմից մատնանշված ***բողոքի հիմքերով և հիմնավորումներով*** և ***չի կարող քննության առարկա դարձնել*** դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի ***այնպիսի խախտումներ***, ***որոնք չեն ներկայացվել վերաքննիչ բողոքում*** *(տե՛ս «Հ.Վ.Մ. Միլի Ֆոուդ» ՍՊԸ-ն ընդդեմ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0219/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2018 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված նորմը կանխորոշում է դատական ակտը վերաքննության կարգով վերանայելու **օբյեկտային սահմանը**՝ նշելով, որ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի դատական ակտը պարտավոր է վերանայել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում (բացառություն համարվող դեպքերը սահմանված են օրենքով), և միայն այն պահանջների մասով, որոնք առաջին ատյանի դատարանում քննվել և որոնց վերաբերյալ դատարանը դատական ակտ է կայացրել: Այսինքն՝ նախատեսված է առաջին ատյանի դատարանի դատական ակտը սահմանափակ՝ վերաքննիչ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների և առաջին ատյանի դատարանի կողմից քննված պահանջի սահմաններում վերանայելու վերաքննիչ դատարանի պարտականությունը, ինչը ոչ լրիվ վերաքննության առանձնահատկություններից է: Վերաքննության օբյեկտային սահմանը առաջին ատյանի դատարանում իրականացված գործի քննության շրջանակով սահմանափակելով՝ օրենսդիրը նպատակ է ունեցել կանխելու վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը, ապահովելու դատական ատյանների գործառութային տարբերությունն ու տրամաբանական բնույթը և երաշխավորելու գործին մասնակցող անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Հետևաբար վերաքննության փուլում չպետք է իրականացվեն դատական ակտի վերանայման օբյեկտային սահմաններից դուրս դատավարական գործողություններ և դրանցով պայմանավորված՝ կիրառվեն դատավարական ներգործության միջոցներ *(տե՛ս ըստ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ի դիմումի թիվ ՏԴ/2886/02/21 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2023 թվականի որոշումը):*

Հիմք ընդունելով վերաքննության սահմանների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում հայտնած իրավական դիրքորոշումները և առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքի կարգավորումներով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ սահմանափակ վերաքննության պայմաններում վերաքննության փուլում՝

1. վերանայման օբյեկտը պետք է լինի ստորադաս դատարանի կողմից կայացված և բողոքարկվող դատական ակտը, այլ ոչ՝ գործն ընդհանրապես,

2. ***բողոքարկվող դատական ակտը պետք է վերանայվի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում***,

3. վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և դրանց հիմնավորումներին՝ քննարկման առարկա դարձնելով դրանցից յուրաքանչյուրը և կատարելով եզրահանգում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ *(տե՛ս Վարդան Աթայանն ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, երրորդ անձ «Ռեգնում» լրատվական գործակալության թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը, Վարդանուշ Բեժանյանի, Շալիկո, Նառա և Նոնա Պարանյաններն ընդդեմ Վաչագան Հակոբյանի թիվ ԼԴ1/0188/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.05.2020 թվականի որոշումը):*

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի և 365-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշված որոշմամբ անդրադարձել է նաև վերաքննության սահմանների վերաբերյալ ընդհանուր կանոններին զուգահեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված բացառություններին և արձանագրել, որ.

1. այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, որի հիման վրա վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի), վերաքննիչ դատարանը չի առաջնորդվում ընդհանուր կանոնով և վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերը չի քննում, այլ անդրադառնում է միայն վերաքննիչ բողոքում տեղ գտած՝ ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան հիմքին, որի հիման վրա բեկանել է դատական ակտը: Նման դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու ընդհանուր կանոնն այլևս չի գործում.

2. օրենսդրի կողմից նախատեսվել է մեկ այլ բացառություն ևս, որը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ և 379-րդ հոդվածի 1-ին մասերի կարգավորումներից: Մասնավորապես, եթե առկա են նշված օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը, ապա վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Այսինքն՝ անդրադառնալով միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքին, որի հիման վրա բեկանում է դատական ակտը, վերաքննիչ դատարանը մյուս հիմքերին այլևս չի անդրադառնում: Վկայակոչված կարգավորման ուժով վերաքննիչ դատարանը ոչ միայն չի անդրադառնում վերաքննիչ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին, այլև չի սահմանափակվում բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և անկախ այն բանից՝ բողոքում տեղ է գտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, թե՝ ոչ, վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկվող դատական ակտը.

3. Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի բոլոր հիմքերին անդրադառնալու կանոնից բացառություն է նաև այն դեպքը, երբ բողոք բերած անձը բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը չի հայտնել առաջին ատյանի դատարանում՝ միաժամանակ զրկված չլինելով նման դիրքորոշում հայտնելու հնարավորությունից: Ուստի նման իրավիճակում վերաքննիչ դատարանը ոչ թե իրավասու է չանդրադառնալու, այլ պարտավոր է չանդրադառնալ վերաքննիչ բողոքի այնպիսի հիմքերի, ի հիմնավորումն որոնց բողոք բերած անձը հայտնում է այնպիսի դիրքորոշում, որը կարող էր հայտնել, սակայն չի հայտնել առաջին ատյանի դատարանում:

Վերոգրյալի ամփոփմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ եթե առկա չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված բացառությունները, ապա ընդհանուր կանոնի համաձայն՝ վերաքննիչ դատարանը ***կաշկանդված է*** բողոքաբերի կողմից մատնանշված բողոքի հիմքերով և հիմնավորումներով և չի կարող քննության առարկա դարձնել դատարանի թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք չեն ներկայացվել վերաքննիչ բողոքում *(տե՛ս Վարդանուշ Բեժանյանը, Շալիկո, Նառա և Նոնա Պարանյաններն ընդդեմ Վաչագան Հակոբյանի թիվ ԼԴ1/0188/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.05.2020 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով վերաքննության սահմանների, ինչպես նաև գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով դրանից արված բացառությունների մասին նախկինում կայացրած իր դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ***վերաքննիչ բողոքը դրա հիմքերի և հիմնավորումների շրջանակում քննելու օրենսդրական կանոնը կոչված է բացառելու վերադաս դատական ատյանի կողմից բողոքում չնշված և դատավարության մյուս մասնակիցների համար չբացահայտված հանգամանքներով վերաքննության սահմաններից դուրս գալու հնարավորությունը***: Հակառակ դեպքում վերադաս դատարանը կիրականացնի գործի ըստ էության և լրիվ ծավալով քննություն, ինչն անհամատեղելի է մրցակցության սկզբունքի և դրանից բխող՝ սահմանափակ վերանայման ինստիտուտի հետ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումներով ընդգծվում է անկախ դատարանի կողմից գործի արդարացի՝ մրցակցության և հավասարության

սկզբունքների պահպանմամբ գործը քննելու սկզբունքների կարևորությունը, ինչը համահունչ է դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներին *(տե՛ս «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Մարտին Դիլանյանի, Ռիտա Աղայանի, Անի Գյուլբուդաղյանի թիվ ՇԴ/5144/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2022 թվականի որոշումը)*:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Դիմելով դատարան՝ Սվետլանա Ավագյանը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի, Լևոն Ղարիբյանի և Ընկերության միջև 30.10.2014 թվականին կնքված հիփոթեքի հաջորդող գրավի պայմանագիրը, ու որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել գրավի իրավունքի պետական գրանցումը:

Որպես հայցի փաստական հիմնավորում հայցվորը հայտնել է, որ վեճի առարկա բնակարանի գրավատու Լևոն Ղարիբյանի հետ ամուսնացել է 16.03.1974 թվականին, հետևաբար բնակարանը ձեռք է բերվել համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, և նման պայմանագիր կնքելիս պետք է լիներ նաև իր համաձայնությունը, ինչը բացակայել է:

Դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ, 198-րդ և 201-րդ հոդվածները, արձանագրելով, որ

*- «Սույն քաղաքացիական գործով հիմնավորվում է, որ Լևոն Ղարիբյանը անշարժ **գույքը ձեռք է բերել**՝ անշարժ գույքի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքը գրանցվել է Լևոն Ղարիբյանի և Սվետլանա Ավագյանի **համատեղ ամուսնական կյանքի ընթացքում***,

- հայցվորի կողմից չի հիմնավորվել «Պրո Կրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի՝ Լևոն Ղարիբյանի և Սվետլանա Ավագյանի՝ ամուսիններ լինելու փաստի վերաբերյալ տեղեկացված լինելու հանգամանքը: (...),

*- թեև գործի դատաքննությամբ **հաստատվեց այն փաստը**, որ **անշարժ գույքը հանդիսացել է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք**, իսկ Լևոն Ղարիբյանը, ի դեմս լիազոր ներկայացուցչի, **առանց համապատասխան համաձայնության տնօրինել է գույքը**՝ գրավադրելով այն, սակայն նշված վեճի լուծման համար էական է հանդիսանում ոչ միայն համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության փաստի ապացուցումը, այլ նաև գործարքի մյուս կողմի այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը*,

- հայցվոր կողմը, հայցի հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198 հոդվածը, կրել է նաև այն փաստի ապացուցման պարտականությունը, որ «Պրո Կրեդիտ Բանկ» ՓԲԸ-ն իմացել է կամ ակնհայտորեն հնարավորություն է ունեցել ենթադրելու, որ գրավադրվող գույքը հանդիսանում է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք և որ Լևոն Ղարիբյանն իրավունք չի ունեցել իր հայեցողությամբ տնօրինելու նշված գույքը,

- «Պրո Կրեդիտ Բանկ» ՓԲԸ-ն չի իմացել ինչպես գույքը համատեղ սեփականություն հանդիսանալու, այնպես էլ համատեղ սեփականության մասնակցի՝ գրավատու Լևոն Ղարիբյանի կողմից անհրաժեշտ լիազորությունների բացակայության մասին և դրա մասին ենթադրելու հիմքեր չի ունեցել»,

եզրահանգել է, որ *«գործով առկա չէ 30.10.2014 թվականի թիվ 53047 հիփոթեքի հաջորդող պայմանագիրը անվավեր ճանաչելու որևէ հիմք, հետևաբար՝ հայցն անհիմն է և ենթակա է մերժման»*:

Հայցվոր Սվետլանա Ավագյանը Դատարանի վճիռը բողոքարկել է վերաքննության կարգով: Վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները կայանում են նրանում, որ.

- Դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել, քանի որ որպես փաստ արձանագրել է, որ Լևոն Ղարիբյանի կողմից Աղաբեկ Ղարիբյանին 26.10.2009 թվականին տրված լիազորագրով վերջինս 30.10.2014 թվականին Լևոն Ղարիբյանի անունից կնքել է թիվ 53047 հիփոթեքի հաջորդող պայմանագիրը և նոտարական կարգով հայտարարություն է տվել առ այն, որ թիվ 6 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու ժամանակ Լևոն Ղարիբյանը ամուսնացած չի եղել և հանդիսանում է վերը նշված անշարժ գույքի միակ սեփականատերը,

- Դատարանը հաստատել է մի փաստ, որն ուղղակի հակասում է գործող օրենսդրությանը, մասնավորապես, որ 26.10.2009 թվականին տրված լիազորագրով, որի ժամկետը օրենքի համաձայն չի կարող երեք տարուց ավել լինել, լիազորված անձը 30.10.2014 թվականին կնքել է հիփոթեքի պայմանագիր և նոտարական կարգով տվել է հայտարարություն,

- Դատարանը կիրառել է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված բացառությունները, չի կիրառել նույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված իմպերատիվ նորմը, որի համաձայն՝ սույն գործով ինքը պետք է պոզիտիվ կամք դրսևորեր բնակարանը գրավադրելու վերաբերյալ: Սակայն Դատարանը, հաստատված համարելով, որ ինքը բնակարանը գրավ դնելու համար համաձայնություն չի տվել, հայցը մերժել է այն հիմքով, որ բանկը տեղեկացված չի եղել գործարք կնքող Լևոն Ղարիբյանի (նրա ներկայացուցչի) մոտ նման գործարք կնքելու լիազորությունների բացակայության մասին: Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/2029/02/19 քաղաքացիական գործով 30.10.2024 թվականի որոշումից բխում է, որ տվյալ դեպքում այդ փաստը գործարքն անվավեր ճանաչելու համար որևէ նշանակություն չունի **(հատոր 8-րդ, գ.թ. 12-17)**:

Վերաքննիչ դատարանը, քննելով հայցվորի բերած վերաքննիչ բողոքը, արձանագրել է հետևյալը.

*- «սույն դեպքում հայցվորի կողմից Դատարան ներկայացված պահանջի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքը հանդիսանում է համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույք, հայցվորի և Լևոն Ղարիբյանի համատեղ սեփականությունն է, ինչի կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործում առկա՝ (...) անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման (...) վկայականից հետևում է, որ վերը նշված բնակարանի նկատմամբ գրանցվել է Լևոն Ղարիբյանի սեփականության իրավունքը Երքաղխորհրդի գործկոմի 04.09.91թ. թիվ 16/3 որոշման հիման վրա (սեփականաշնորհում), իսկ վերը շարադրված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումից բխում է, որ **սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության կարգավիճակը չի գործում***,

*- սույն դեպքում գործում առկա ապացույցներով **չի հիմնավորվել, որ հայցվորը** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի իրավակարգավորումների հիման վրա **հանդիսանում է վեճի առարկա** հանդիսացող պայմանագրով գրավադրված **անշարժ գույքի համասեփականատեր**, որպիսի պայմաններում առհասարակ բացակայել է հայցը բավարարելու իրավաչափ հնարավորությունը, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքում ներկայացված պնդումներն ինքնին դատական ակտի բեկանման հանգեցնել չեն կարող»*,

եզրահանգել է, որ *«Դատարանի կողմից անհիմն է հաստատված համարվել փաստն այն մասին, որ վերը նշված բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև հայցվորը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարանը հայցվորի և Լևոն Ղարիբյանի՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության կարգավիճակը չունի»*:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը լրացուցիչ պատճառաբանությամբ անփոփոխ է թողել Դատարանի վճիռը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի վճռի դեմ Սվետլանա Ավագյանի ներկայացրած վերաքննիչ բողոքում բացակայում է որևէ փաստարկ՝ վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության կարգավիճակի վիճելիության վերաբերյալ:

Մասնավորապես, Դատարանը հաստատված է համարել, և վերաքննիչ բողոքում չի վիճարկվել փաստն այն մասին, որ «***անշարժ գույքը հանդիսացել է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք***»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների շրջանակից, և վերաքննության օբյեկտ է դարձրել ոչ թե վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների շրջանակում Դատարանի վճիռը, այլ՝ գործն ընդհանրապես:

Վեճի առարկա գույքի կարգավիճակը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով քննարկման առարկա դարձնելով՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի առանձնահատկությունները, ինչի հետևանքով խախտվել են ինչպես Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ու Կոնվենցիայի 6-րդ հոդվածով Սվետլանա Ավագյանի երաշխավորված՝ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, դատարան դիմելու հնարավորության ապահովման, այնպես էլ՝ գործն անկախ և անաչառ դատարանի կողմից արդարության պահանջների՝ մրցակցության ու հավասարության սկզբունքների պահպանմամբ քննելու իրավունքները:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ ի հիմնավորումն վեճի առարկա բնակարանը համատեղ սեփականություն հանդիսանալու փաստի՝ հայցվոր Սվետլանա Ավագյանը Դատարան է ներկայացրել, իր հերթին Դատարանը որպես ապացույց հետազոտել է Ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշումը:

Նշված որոշմամբ Ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն ***հանձնարարել է*** կոոպերատիվի անդամ քաղաքացիների դիմումների հիման վրա ***որպես անձնական սեփականություն գույքագրել*** բնակարանային, բնակշինարարական ավտոտնակների և այլ ***կոոպերատիվներում նրանց պատկանելիք մասը***, ***եթե կոոպերատիվի անդամը լրիվ մուծել է իր փայը***՝ բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի ու իր օգտագործմանը տրված այլ շինության կամ տեղի համար **(հատոր 3-րդ, գ.թ. 141-142):**

Նախկինում կայացրած որոշմամբ վկայակոչելով «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի և Բնակարանային շինարարական կոոպերատիվների օրինակելի կանոնադրության կարգավորումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ***կոոպերատիվի փայն ամբողջությամբ վճարած կոոպերատիվի անդամը գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք***: Վերլուծելով գործի փաստական հանգամանքները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ *«(...) բնակարանի նկատմամբ փայի մասի վճարման հիմքով սեփականության իրավունք են ձեռք բերել (...)» (տե՛ս Զարեհ Երիցյանն ընդդեմ Կարինե Հարությունյանի և մյուսների թիվ 3-141 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը):*

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ սեփականաշնորհումն ու կոոպերատիվի փայավճարի վճարելու եղանակը սեփականության իրավունքի ձեռքբերման տարբեր հիմքեր են, մինչդեռ Վերաքննիչ դատարանը Ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային

խորհրդի գործադիր կոմիտեի որոշումը, որի բովանդակությունից ակնհայտ է, որ կոոպերատիվի անդամների կողմից սեփականության իրավունքի ձեռքբերումը հնարավոր է բացառապես փայը վճարելու հիմքով, գնահատել է որպես ***սեփականաշնորհում***:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հայցվոր Սվետլանա Ավագյանի և Լևոն Ղարիբյանի ամուսնությունը գրանցվել է 11.02.1975 թվականին (**հատոր 4-րդ, գ.թ. 124**), իսկ վեճի առարկա բնակարանի նկատմամբ Լևոն Ղարիբյանի սեփականության իրավունքը գրանցվել է 08.09.2002 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 11-14**), հետևաբար Դատարանն իրավացիորեն հաստատված է համարել փաստն այն մասին, որ *«անշարժ գույքը հանդիսացել է համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույք»*:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 20.02.2026 թվականի որոշումը բեկանելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին ու հիմնավորումներին:

Վերոգրյալ պատճառաբանությամբ միաժամանակ հերքվում են նաև վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին, նկատի ունենալով, որ բողոքարկման ինստիտուտի միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը կկրի զուտ ձևական բնույթ, եթե վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում կայացնի բողոքը մերժելու մասին՝ առանց գնահատման արժանացնելու բողոքում ներկայացված յուրաքանչյուր հիմք և, ըստ այդմ, անձին զրկելով բողոքում բարձրացված յուրաքանչյուր հիմքի կապակցությամբ վերադաս դատարանի եզրահանգումը ստանալու իրավունքից *(տե՛ս Վարդան Աթայանն ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի, երրորդ անձ «Ռեգնում» լրատվական գործակալության թիվ ԵԿԴ/1320/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը)*, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից քննելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2026 թվականի որոշումն ու գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ